



## ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

### ՈՐՈՇՈՒՄ

04 ապրիլի 2019 թվականի թիվ 35-Ա

ք. Երևան

#### «ԷԶՄԻԱԾԻՆ» ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԿՈՈՊԵՐԱՏԻՎԻ ՆԿԱՏԱՄԲ ՀԱՐՈՒՑՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՐՃԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով) ուսումնասիրելով 2019 թվականի փետրվարի 27-ին հարուցված թիվ 3 վարչական վարույթի նյութերը՝ *պարզեց*.

Հանձնաժողովը ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի բ) կետով 2019 թվականի փետրվարի 27-ին «ԷԶՄԻԱԾԻՆ» ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ» արտադրական կոդպերատիվի (այսուհետ՝ Ընկերություն) նկատմամբ հարուցել է վարչական վարույթ՝ 2018 թվականի դեկտեմբերի 15-ից մինչև 31-ն ընկած ժամանակահատվածում Ընկերության կողմից ներկայացված եթերի պահոցային ձայնագրությունները հեռարձակված եթերի ձայնագրություններին չհամապատասխանելու հիմքով:

Հարուցված վարչական վարույթի ընթացքում Ընկերությունը 2019 թվականի մարտի 15-ի թիվ 4 գրությամբ ներկայացրել է իր պարզաբանումը, համաձայն որի՝ ներկայացված եթերի ձայնագրություններին մեջ պահպանված չի եղել ժամային գրաֆիկը և կրկին ներկայացրել են 2018 թվականի դեկտեմբերի 15-ից մինչև 31-ն ընկած ժամանակահատվածում հեռարձակված եթերի ձայնագրությունների ուղղված տարբերակը:

Ներկայացված ձայնագրությունները հանդիսանում են Ընկերության կողմից 2018 թվականի դեկտեմբերի 15-ից մինչև 31-ն ընկած ժամանակահատվածում հեռարձակված եթերի ձայնագրությունները և համապատասխանում են «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի պահանջներին:

Օրենքի պահանջի խախտումը վերացնելու հիմքով Ընկերության նկատմամբ հարուցված թիվ 3 վարչական վարույթը ենթակա է կարճման:

«Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հեռուստառադիոընկերությունները պարտավոր են պահպանել իրենց

հեռարձակած հաղորդումների տեսագրություններն ու ձայնագրությունները՝ հեռարձակման օրվանից սկսած մեկ ամիս ժամկետով:

«Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ մեկ ամիսը լրանալուց հետո հեռուստառադիոհաղորդումների տեսագրությունները և ձայնագրությունները կարող են ջնջվել, եթե այդ ընթացքում հաղորդումներում տեղ գտած տեղեկությունների հերքման կամ այլ վիճելի հարցերի վերաբերյալ Հանրային հեռուստառադիոընկերության խորհուրդ, Հանձնաժողով կամ հեռուստառադիոընկերություններ դիմում կամ բողոք կամ դատարան հայց չի ներկայացվել: Նշված ձայնագրություններն ու տեսագրությունները կարող են չպահպանվել վիճելի հարցերի լուծումից հետո:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի ա) կետի համաձայն՝ վարչական մարմնի նախաձեռնությամբ հարուցված վարչական վարույթը կարող է կարճվել, եթե՝

ա) անձը, ում հասցեագրված է լինելու վարչական ակտը, վերացրել է օրենքի կամ իրավական այլ ակտի պահանջների խախտումները կամ պատշաճ միջոցներ է ձեռնարկել խախտումները կանխելու ուղղությամբ, և նման դեպքերում օրենքն այդ խախտումների վերաբերյալ չի պահանջում վարչական ակտի ընդունում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 1-ին, 5-րդ մասերով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի ա) կետով սահմանված դրույթներով՝ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը ***որոշեց.***

1. Կարճել «ԷՋՄԻԱԾԻՆ» ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ» արտադրական կոդպերատիվի նկատմամբ հարուցված թիվ 3 վարչական վարույթը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում այն «ԷՋՄԻԱԾԻՆ» ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ» արտադրական կոդպերատիվին պատշաճ ձևով հանձնելու օրվան հաջորդող օրվանից:
3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

**ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ  
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ**

**Տ. ՀԱԿՈԲՅԱՆ**

04 ապրիլի 2019թ.  
ք. Երևան